

«ԱՏՈՊ» ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից հեռավար եղանակով ֆինանսական ծառայություններ ֆիզիկական անձանց համար տրամադրվում են «UNIMobile» բջջային հավելվածի (այսուհետ՝ Հավելված) և Ինտերնետ Բանկ-Հաճախորդ համակարգի, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար՝ «UNIBusiness Mobile» հավելվածի (այսուհետ՝ Հավելված) և «Ինտերնետ Բանկ-Հաճախորդ» համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

2. Ցանկության դեպքում Հաճախորդը կարող է արգելափակել Հավելվածի/Համակարգի միջոցով տրամադրվող բոլոր ծառայությունները կամ ծառայություններից որևէ մեկը՝ Բանկի կողմից կիրառվող «Ստոպ» գործիքների միջոցով:

3. Բոլոր ծառայությունները արգելափակելու նպատակով Հաճախորդը Հավելվածում/Համակարգում ընտրում է «Stop բոլոր ծառայությունները» հրահանգը, որից հետո Հաճախորդին համար արտացոլվում է հաստատման հաղորդագրություն՝ Բանկի կողմից սահմանված տեքստով:

4. Հաճախորդի կողմից հաղորդագրությունը հաստատելուց հետո Հաճախորդի՝ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին ինքնաշխատ եղանակով ուղարկվում է բոլոր ծառայությունների արգելափակման մասին հաղորդագրություն՝ Բանկի կողմից սահմանված տեքստով և Հաճախորդի հաղորդակցման լեզվով:

5. Ֆիզիկական անձ Հաճախորդի կողմից հաղորդագրությունը հաստատելուց հետո Հավելվածում արգելափակվում են հեռահար եղանակով կատարվող գործողությունները, մասնավորապես.

- 1) Երրորդ անձանց փոխանցումները (փոխանցում Բանկի ներսում, փոխանցում ՀՀ այլ բանկ, փոխանցում այլ քարտին, UBPAY համակարգով փոխանցում, ArCaPay համակարգով փոխանցում, SWIFT փոխանցում, փոխանցում բյուջե, ԶԻՆԱՊԱՀ հիմնադրամին նվիրաբերություն),
- 2) քարտի կցումը էլեկտրոնային դրամապանակին (Apple pay, Google wallet և այլն),
- 3) քարտով առցանց (card-not-present) վճարումները և գնումները,
- 4) նոր վարկի ստացումը,
- 5) գործող ավանդի խզումը և նվազեցումը,
- 6) նոր հաշվի բացումը,
- 7) նոր թվային քարտի բացումը,
- 8) այլ բանկի քարտի կցումը Հավելվածում,
- 9) կոմունալ վճարումները,
- 10) խմբային կոմունալ վճարումները,
- 11) ՀԿԱԾ վճարումները,
- 12) գույքահարկի վճարումը,
- 13) ՀՀ ՃՈՎ վճարումները,
- 14) այլ վարկերի մարումները:

6. Բոլոր ծառայություններն արգելափակված լինելու դեպքում ֆիզիկական անձ Հաճախորդը կարող է Հավելվածի միջոցով իրականացնել հետևյալ գործողությունները՝

- 1) սեփական վարկի մարում,
- 2) սեփական ավանդի համալրում,
- 3) հաշվի/քարտի մնացորդի դիտում,
- 4) հաշվի/քարտի քաղվածքի արտահանում,

- 5) նախկինում կատարված գործարքի անդորրագրի արտահանում,
- 6) քարտի գործողության կասեցում, սահմանափակում ըստ տարածաշրջանների,
- 7) կենսաթոշակային մնացորդի ստուգում,
- 8) իր հաշիվների միջև փոխանցում:

7. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում Հաճախորդի կողմից հաղորդագրությունը հաստատելուց հետո Հավելվածում/Համակարգում արգելափակվում են հեռահար եղանակով կատարվող գործողությունները, մասնավորապես.

- 1) փոխանցումներ Բանկի ներսում,
- 2) փոխանցումներ ՀՀ այլ բանկ,
- 3) SWIFT փոխանցումներ,
- 4) փոխանցումներ բյուջե,
- 5) ՁԻՆԱՊԱՀ հիմնադրամին նվիրաբերություններ,
- 6) կոմունալ վճարումներ:

8. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում բոլոր ծառայություններն արգելափակված լինելու դեպքում Հաճախորդը կարող է Հավելվածի/Համակարգի միջոցով իրականացնել հետևյալ գործողությունները՝

- 1) հաշվի/քարտի մնացորդի դիտում,
- 2) հաշվի/քարտի քաղվածքի արտահանում,
- 3) նախկինում կատարված գործարքի անդորրագրի արտահանում,
- 4) իր հաշիվների միջև փոխանցում:

9. Ծառայություններից որևէ մեկն արգելափակելու նպատակով Հաճախորդը Հավելվածում/Համակարգում ընտրում է «Stop ծառայություն» հրահանգը, որից հետո Հաճախորդի համար արտացոլվում է հաստատման հաղորդագրություն՝ Բանկի կողմից սահմանված տեքստով:

10. Հաճախորդի կողմից հաղորդագրությունը հաստատելուց հետո ծառայություններն արգելափակվում են անհապաղ՝ առավելագույնը 60 (վաթսուն) վայրկյանի ընթացքում:

11. Ծառայությունների արգելափակման նպատակով Հաճախորդը կարող է նաև զանգահարել Թեժ հեռախոսակապի կենտրոն կամ այցելել Բանկի գլխամասային գրասենյակի սպասարկման սրահ կամ ցանկացած մասնաճյուղ և ստորագրել ու կնքել (կնիքի առկայության դեպքում) ծառայությունների արգելափակման դիմումը:

12. Ծառայությունների ապարգելափակման նպատակով Հաճախորդը կարող է զանգահարել Թեժ հեռախոսակապի կենտրոն կամ այցելել Բանկի գլխամասային գրասենյակի սպասարկման սրահ կամ ցանկացած մասնաճյուղ և ստորագրել ու կնքել (կնիքի առկայության դեպքում) ծառայությունների ապարգելափակման դիմումը:

13. Հաճախորդի կողմից ծառայությունների ապարգելափակման դիմումը ստանալուց հետո Բանկն ապարգելափակում է նշված ծառայությունները 24 ժամվա ընթացքում:

14. Անհետաձգելի՝ անհապաղ ապարգելափակում հնարավոր է միայն Հաճախորդի ֆիզիկական ներկայությամբ՝ Բանկի գլխամասային գրասենյակի սպասարկման սրահում կամ ցանկացած մասնաճյուղում:

15. Ապարգելափակման դիմումը կարող է բավարարվել ոչ շուտ, քան արգելափակման պահից 24 ժամ հետո՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ապարգելափակումն իրականացվում է Հաճախորդի ֆիզիկական ներկայությամբ:

16. «UNIMobile» հավելվածի և «UNIBusiness Mobile» հավելվածի միջոցով տրամադրվող ծառայությունների արգելափակման կամ ապարգելափակման դեպքում նշված ծառայություններն համապատասխանաբար արգելափակվում կամ ապարգելափակվում են նաև «Ինտերնետ Բանկ-Հաճախորդ» համակարգում: